ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 11/1783

«24» [illegible] 2009թ.

Ձեր

ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Ա. Շահնազարյանին

Ձեզ է ուղարկվում ՀՀ ոստիկանության կարիքների համար ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության քարտերի ձեռքբերման մեկ անձից գնման ընթացակարգի արձանագրությունը:

Առդիր «17» թերթ:

Ոստիկանության գեներալ-լեյտենանտ Հ. Հունանյան

10043-09

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ոստիկանության

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ECONOMIC DEPARTMENT
OF POLICE OF THE
REPUBLIC OF ARMENIA

ХОЗЯЙСТВЕННОЕ
УПРАВЛЕНИЕ
ПОЛИЦИИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

375025 ք.Երևան, Նալբանդյան 130
հեռ. 56-37-00, 59-61-88

375025 Yerevan, 130 Nalbandian str.
tel. 56-37-00, 59-61-88

375025 г.Ереван, ул.Налбандяна 130
тел. 56-37-00, 59-61-88

Ձեր N________________

24.12.09 N 11/1788

«Ոսկան Երևանցի» տպագրատուն-
արտադրահրատարակչական ՓԲԸ տնօրեն՝
պարոն՝ Մ. Տեր-Սարգսյանին

# ՀՐԱՎԵՐ

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ-ՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԵՎ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ

ՀՀ ոստիկանության կարիքների բավարարման նպատակով առաջարկվում է Ձեզ մատակարարել ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության քարտեր /այսուհետ՝ Ապրանք/ կնքվելիք պայմանագրի նախագծին, դրանով սահմանված տեխնիկական հատկանիշներին, գնման պայմաններին, ինչպես նաև սույն հրավերի պահանջներին համապատասխան:

Գնումները ֆինանսավորվելու են ՀՀ 2009թ. պետական բյուջեի միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել նշված գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը՝ ներառյալ բոլոր ծախսերը, ինչպես նաև հարկերը,մաքսային տուրքերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն գնման գործընթացին մասնակցելու համար ընկերությունը պետք է բավարարի «Գնումների մասին» ՀՀ օրենքի և սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Այդ նպատակով պատվիրատուին պետք է ներկայացվի ստորագրված և կնքված հայտարարություն այն մասին, որ «Ոսկան Երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ՓԲԸ-ն

1. ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ;

2. դատական կարգով անվճարունակ ճանաչված չէ, լուծարման գործընթացում չի գտնվում, չունի արգելանքի տակ պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք:

3 «Ոսկան Երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ՓԲԸ-ն կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է.

ա/ դատապարտված լինի տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է;

բ/ գնման պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած լինի կեղծ տվյալներ;

գ/ իր գործողությամբ կամ անգործությամբ խախտած լինի գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ընկերությունը պետք է ներկայացնի տեղեկատվություն /հայտարարություն/ մատակարարվող ապրանքի ծագման երկրի մասին:

4. «Ոսկան Երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ՓԲԸ-ն կհամարվի չորակավորված, ինչպես նաև վերջինիս հայտը կմերժվի, եթե նրա որակավորման հատկանիշների մասին և սույն հրավերով պահանջվող տվյալները չեն համապատասխանի հրավերով սահմանված չափանիշներին /պահանջներին/:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունները կամ տեղեկանքները:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը՝ 6-թերթից:

Պետի ժ/պ՝ Գ. Մարտիրոսյան

«ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ»
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԱՊՁԲ- ԱՁԿՁ/09

ք. Երևան «14» ----12------ 2009թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Հ. Հունանյանի, (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից, և «Ոսկան Երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ՓԲ ընկերության տնօրեն Մ. Տեր-Սարգսյանը, (այսուհետ՝ «Մատակարար»), մյուս կողմից, ղեկավարվելով իրենց կանոնադրություններով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.1. Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված քանակությամբ 45.000 / քառասունհինգ հազար/ հատ AA, AB, AC սերիաների 0000001 համարից մինչև 0045000 համարը ներառյալ, ձևով և ժամկետներում Պատվիրատուին մատակարարել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ նախատեսված ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության քարտեր /այսուհետև՝ «Ապրանք»/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

1.2. Մատակարարն Ապրանքը մատակարարում է Պայմանագրով նշված ծավալներով և ժամկետներում ք. Երևան, Նալբանդյան 130 հասցեով, իր միջոցներով: Ապրանքի մատակարարման ժամկետն է մինչև 2010 թվականի հունվարի 14-ը ներառյալ:

1.3. Մատակարարը պարտավորվում է Պատվիրատուին մատակարարել չօգտագործված Ապրանք:

## 2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Մատակարարի կողմից Ապրանքի մատակարարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Մատակարարի գործունեությանը.

2.1.2. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել՝ հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Մատակարարի կողմից մատակարարված Ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված պահանջներին և /կամ/ խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը և Ապրանքը չի կարող մատակարարվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3. Չընդունել Ապրանքը՝ սահմանված տեխնիկական հատկանիշով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Մատակարարից՝ վճարելու սույն պայմանագրի 3.2. և 3.4. կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.1.4. Մինչև Ապրանքը Պատվիրատուին մատակարարելը՝ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Մատակարարին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Մատակարարին:

2.1.5 Միակողմանի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց (լրիվ կամ մասնակի), եթե Մատակարարը էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

2.1.6 Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե մատակարարված Ապրանքը չի համապատասխանում տեխնիկական հատկանիշների պահանջներին

ա) մատակարարված Ապրանքը անորակ է և այն չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

**2.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Ուսումնասիրել և ընդունել տեխնիկական հատկանիշին համապատասխան մատակարարված Ապրանքը, իսկ մատակարարման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Մատակարարին:

2.2.2. Վճարման ժամկետի խախտման դեպքում վճարել սույն պայմանագրի 3.5. կետով նախատեսված տույժը:

**2.3. Մատակարարն իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքը:

2.3.2. Մինչև Պատվիրատուին Ապրանքի մատակարարելը, Պատվիրատուի կողմից սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում պահանջել հատուցելու պատճառված վնասները:

2.3.3. Մինչև Պատվիրատուին Ապրանքի մատակարարելը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանգրի 4.3. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 3.5. կետով նախատեսված տույժը:

**2.4. Մատակարարը պարտավոր է՝**

2.4.1. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ապրանքի մատակարարումը:

2.4.2 Պայմանագրով նախատեսված Ապրանքի ամբողջական մատակարարումից հետո, տպագրելիս խոտանված ապրանքի թվաքանակին համապատասխան, ՀՀ ոստիկանության կողմից առաջարկված սերիայով եւ համարներով տպագրել եւ մատակարարել նոր ապրանք՝ մեկ ամսյա ժամկետում:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքերում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 3.4 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 3.2 և 3.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

## 3. Կողմերի պատասխանատվությունը

3.1 Մատակարարը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով նախատեսված կարգով Ապրանքի մատակարարման համար:

3.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքերում պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ապրանքը

չընդունելու, Ապրանքը չմատակարարելու յուրաքանչյուր ուշացված օրվա համար Մատակարարի նկատմամբ հաշվարկվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05%-ի չափով:

3.3 Սույն պայմանագրի 3.2 և 3.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Մատակարարի կողմից Ապրանքի մատակարարման համար վճարված գումարից:

3.4 Մատակարարի կողմից Տեխնիկական հատկանիշների պահանջներին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

3.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի չափով:

3.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.7 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

3.8 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Մատակարարին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Մատակարարի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Մատակարարը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրով Մատակարարի կողմից մատակարարման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է 9.000.000 /ինը միլիոն/ ՀՀ դրամ:

4.2 Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Մատակարարի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերի, տուրքերի, պարգևավճարները և շահույթը:

4.3. Գնորդը սույն պայմանագրի 4.1 կետում նշված 9.000.000 /ինը միլիոն/ ՀՀ դրամը միանվագ կարգով, որպես 100% կանխավճար փոխանցում է Մատակարարի հաշվարկային հաշվին սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 3 բանկային օրվա ընթացքում:

Կանխավճարի մարումը պետք է իրականացվի մատակարարված Ապրանքին համապատասխան:

## 5. Մատակարարվող Ապրանքի որակը

5.1 Մատակարարը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի և պայմանագրի N 1 Հավելվածի պահանջներին:

## 6. Ապրանքի հանձնման և ընդունման կարգը

6.1 Մատակարարը Ապրանքի մատակարարման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնում է մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

6.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակ կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.3 Մատակարարի մատակարարած Ապրանքը համարվում է Պատվիրատուի կողմից ընդունված հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու պահից:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

8.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.4 Սույն՝ պայմանագրով չկարգավորող բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ :

8.5 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 Հավելվածը բաղկացած է ___ էջից և հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

8.6 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**«ՄԱՏԱԿԱՐԱՐ»**

«Ոսկան Երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ՓԲԸ
Ք. Երևան, Նոր-Նորքի 1-ին զանգված
Սաֆարյան փող., 11/1ա
«Հայէկոնոմբանկ» խորհրդ. մ/ճ
ՀՎՀՀ 02502806
ՀՀ 163078300056

_______ Մ. Տեր-Սարգսյան

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՎՀՀ 01533334
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011159044

_______ Հունանյան

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

| Հ/հ | Ապրանքի անվանումը | Չ/մ | Քանակ | Տեխնիկական հատկանիշը և այլ պահանջներ |
|---|---|---|---|---|
| | ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության քարտ | հատ | 45.000 | ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության քարտը տպագրել ՀՀ կառավարության 07.02.2008թ. թիվ 134-Ն «Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու /կացության կարգավիճակը երկարաձգելու/ դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի քննարկման կարգը, ժամանակավոր կացության քարտի, մշտական կացության քարտի և ՀՀ հատուկ անձնագրերի նկարագրերը և ձևերը հաստատելու մասին» որոշման պահանջի համաձայն:<br>1.2.1. Նշված որոշմամբ հաստատված ՀՀ-ում ժամանակավոր կամ մշտական կացության քարտերի նկարագրի տեխնիկական բնութագրի որոշ մանրամասները՝<br>Թղթի տեխ. բնութագիրը՝<br>-թղթի խտությունը 100-120գ/մ/ք<br>-100%-ի PCB, սպիտակ քիմիական միջուկից<br>-ոչ մի ռեակտիվներ, մանրաթել, տեսողական զոնաքափող գործոններից զուրկ.<br>-ներառում են անտեսանելի մանրաթելեր, որոնք արտացոլում են կանաչ և դեղին գույներով<br>Թուղթը ջրանիշով -100 գր.<br>«Վալակնո»- մուգ կարմիր-տեսանելի<br>«Վալակնո»-բաց կանաչ-թույլ տեսանելի<br>ուլտրամանուշակագույն լույսի տակ դիտվում է որպես դեղնականաչավուն<br>1 դմ/քառ. վրա 20-ից – 30 թելիկներ, որոնց երկարությունը՝ 4± 0.5մմ:<br>Փաթեթավորումը՝ պոլիէթիլենից վակումային փաթեթներով, յուրաքանչյուրում 1000-ական: |

«ՄԱՏԱԿԱՐԱՐ»

«Ոսկան Երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ՓԲԸ
Ք. Երևան, Նոր-Նորքի 1-ին զանգված
Սաֆարյան փող., 11/1ա
«Հայէկոնոմբանկ» Խորհրդ. մ/ճ
ՀՎՀՀ 02502806
ՀՀ 163078300056
-------------- Մ. Տեր-Սարգսյան

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՎՀՀ 01533334
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011159044
-------------- Հունանյան

ՆԱԽԱԳԻԾ

# «ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ» ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԱՊՁԲ- ԱՁԿՁ/09

ք. Երևան « » ---------------- 2009թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Հ. Հունանյանի, (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից, և «Ոսկան Երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ՓԲ ընկերության տնօրեն Մ. Տեր-Սարգսյանը, (այսուհետ՝ «Մատակարար»), մյուս կողմից, ղեկավարվելով իրենց կանոնադրություններով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.1. Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված քանակությամբ 45.000 / Քառասունհինգ հազար/ հատ AA, AB, AC սերիաների 0000001 համարից մինչև 0045000 համարը ներառյալ, ձևով և ժամկետներում Պատվիրատուին մատակարարել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ նախատեսված ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության քարտեր /այսուհետև՝ «Ապրանք»/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

1.2. Մատակարարն Ապրանքը մատակարարում է Պայմանագրով նշված ծավալներով և ժամկետներում ք. Երևան, Նալբանդյան 130 հասցեով, իր միջոցներով: Ապրանքի մատակարարման ժամկետն է մինչև 2010 թվականի հունվարի 14-ը ներառյալ:

1.3. Մատակարարը պարտավորվում է Պատվիրատուին մատակարարել չօգտագործված Ապրանք:

## 2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Մատակարարի կողմից Ապրանքի մատակարարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Մատակարարի գործունեությանը.

2.1.2. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել՝ հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Մատակարարի կողմից մատակարարված Ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված պահանջներին և /կամ/ խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը և Ապրանքը չի կարող մատակարարվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3. Չընդունել Ապրանքը՝ սահմանված տեխնիկական հատկանիշով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Մատակարարից՝ վճարելու սույն պայմանագրի 3.2. և 3.4. կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.1.4. Մինչև Ապրանքը Պատվիրատուին մատակարարելը՝ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Մատակարարին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Մատակարարին:

2.1.5 Միակողմանի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց (լրիվ կամ մասնակի), եթե Մատակարարը էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

2.1.6 Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե մատակարարված Ապրանքը չի համապատասխանում տեխնիկական հատկանիշների պահանջներին

ա) մատակարարված Ապրանքը անորակ է և այն չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

**2.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Ուսումնասիրել և ընդունել տեխնիկական հատկանիշին համապատասխան մատակարարված Ապրանքը, իսկ մատակարարման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Մատակարարին:

2.2.2. Վճարման ժամկետի խախտման դեպքում վճարել սույն պայմանագրի 3.5. կետով նախատեսված տույժը:

**2.3. Մատակարարն իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքը:

2.3.2. Մինչև Պատվիրատուին Ապրանքի մատակարարելը, Պատվիրատուի կողմից սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում պահանջել հատուցելու պատճառված վնասները:

2.3.3. Մինչև Պատվիրատուին Ապրանքի մատակարարելը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանգրի 4.3. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 3.5. կետով նախատեսված տույժը:

**2.4. Մատակարարը պարտավոր է՝**

2.4.1. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ապրանքի մատակարարումը:

2.4.2 Պայմանագրով նախատեսված Ապրանքի ամբողջական մատակարարումից հետո, տպագրելիս խոտանված անձնագրի բլանկների թվաքանակին համապատասխան, ՀՀ ոստիկանության կողմից առաջարկված սերիայով եւ համարներով տպագրել եւ մատակարարել նոր անձնագրերի բլանկներ՝ մեկ ամսյա ժամկետում:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքերում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 3.4 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 3.2 և 3.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

## 3. Կողմերի պատասխանատվությունը

3.1 Մատակարարը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով նախատեսված կարգով Ապրանքի մատակարարման համար:

3.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքերում պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ապրանքը

չընդունելու, Ապրանքը չմատակարարելու յուրաքանչյուր ուշացված օրվա համար Մատակարարի նկատմամբ հաշվարկվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05%-ի չափով:

3.3 Սույն պայմանագրի 3.2 և 3.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Մատակարարի կողմից Ապրանքի մատակարարման համար վճարված գումարից:

3.4 Մատակարարի կողմից Տեխնիկական հատկանիշների պահանջներին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

3.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի չափով:

3.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.7 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

3.8 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Մատակարարին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Մատակարարի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Մատակարարը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրով Մատակարարի կողմից մատակարարման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է --------------- /-----------------/ ՀՀ դրամ:

4.2 Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Մատակարարի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերի, տուրքերի, պարգևավճարները և շահույթը:

4.3. Գնորդը սույն պայմանագրի 4.1 կետում նշված --------------- /-------------------- ----------/ ՀՀ դրամը միանվագ կարգով, որպես 100% կանխավճար փոխանցում է Մատակարարի հաշվարկային հաշվին սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 3 բանկային օրվա ընթացքում:

Կանխավճարի մարումը պետք է իրականացվի մատակարարված Ապրանքին համապատասխան:

## 5. Մատակարարվող Ապրանքի որակը

5.1 Մատակարարը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի և պայմանագրի N 1 Հավելվածի պահանջներին:

## 6. Ապրանքի հանձման և ընդունման կարգը

6.1 Մատակարարը Ապրանքի մատակարարման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնում է մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

6.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակ կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.3 Մատակարարի մատակարարած Ապրանքը համարվում է Պատվիրատուի կողմից ընդունված հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու պահից:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

8.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.4 Սույն՝ պայմանագրով չկարգավորող բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ :

8.5 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 Հավելվածը բաղկացած է ___ էջից և հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

8.6 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| «ՄԱՏԱԿԱՐԱՐ» | «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ» |
|---|---|
| «Ոսկան Երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ՓԲԸ<br>Ք. Երևան, Նոր-Նորքի 1-ին զանգված Սաֆարյան փող., 11/1ա<br>«Հայէկոնոմբանկ» խորհրդ. մ/ճ<br>ՀՎՀՀ 02502806<br>ՀՀ 163078300056 | ՀՀ ոստիկանություն<br>ք. Երևան, Նալբանդյան 130<br>ՀՎՀՀ 01533334<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011159044 |
| -------------------- Մ. Տեր-Սարգսյան | -------------------------- Հ. Հունանյան |

Հավելված N 1
«__» 2009թ. կնքված
N ՀՀ Ո ԱՊՁԲ-ԱԿՔԿ/09 ծածկագրով
պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

| Հ/հ | Ապրանքի անվանումը | Չ/մ | Քանակ | Տեխնիկական հատկանիշը և այլ պահանջներ |
|---|---|---|---|---|
| | ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության քարտ | հատ | 45.000 | ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության քարտը տպագրել ՀՀ կառավարության 07.02.2008թ. թիվ 134-Ն «Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու /կացության կարգավիճակը երկարաձգելու/ դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի քննարկման կարգը, ժամանակավոր կացության քարտի, մշտական կացության քարտի և ՀՀ հատուկ անձնագրերի նկարագրերը և ձևերը հաստատելու մասին» որոշման պահանջի համաձայն:<br>1.2.1. Նշված որոշմամբ հաստատված ՀՀ-ում ժամանակավոր կամ մշտական կացության քարտերի նկարագրի տեխնիկական բնութագրի որոշ մանրամասները՝<br>Թղթի տեխ. բնութագիրը՝<br>-թղթի խտությունը 100-120գ/մ/ք<br>-100%-ի PCB, սպիտակ քիմիական միջուկից<br>-ոչ մի ռեակտիվներ, մանրաթել, տեսողական գունաքափող գործոններից զուրկ.<br>-ներառում են անտեսանելի մանրաթելեր, որոնք արտացոլում են կանաչ և դեղին գույներով<br>Թուղթը ջրանիշով -100 գր.<br>«Վոլակնո»- մուգ կարմիր-տեսանելի<br>«Վոլակնո»-բաց կանաչ-թույլ տեսանելի<br>ուլտրամանուշակագույն լույսի տակ դիտվում է որպես դեղնականաչավուն<br>1 դմ/քառ. վրա 20-ից – 30 թելիկներ, որոնց երկարությունը՝ 4± 0.5մմ:<br>Փաթեթավորումը՝ պոլիէթիլենից վակումային փաթեթներով, յուրաքանչյուրում 1000-ական: |

**«ՄԱՏԱԿԱՐԱՐ»**

«Ոսկան Երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ՓԲԸ
Ք. Երևան, Նոր-Նորքի 1-ին զանգված
Սաֆարյան փող., 11/1ա
«Հայէկոնոմբանկ» Խորհրդ. մ/ճ
ՀՎՀՀ 02502806
ՀՀ 163078300056

------------------- Մ. Տեր-Սարգսյան

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՎՀՀ 01533334
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011159044

------------------------ Հ. Հունանյան

[illegible]

"24" 12.2009թ.

## ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

| | |
|---|---|
| Անվանումը | ՀՀ ոստիկանություն |
| Հասցեն | Ք. Երևան Նալբանդյան 130 |

1.2. Գնման առարկայի տեսակը

ապրանք ■ աշխատանք ☐ ծառայություն ☐

1.3. Կարիքի բավարարման միջոցը

գնում ■ վարձակալություն ☐ լիզինգ ☐

1.4. Գնման առարկայի համառոտ նկարագիրը ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության քարտերի ձեռքբերում

1.5. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի

| | |
|---|---|
| Անվանումը (անունը, ազգանունը) | «Ոսկան երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ՓԲԸ |
| Հասցեն | Ք. Երևան, Նոր-Նորքի 1-ին զանգված Սաֆարյան փող., 11/1ա |

1.6. Կնքված գնման պայմանագրի (կցվում է)

Ծածկագիրը ՀՀ Ո ԱՊՁԲ- ԱՔԿՔ/09
Կնքման ամսաթիվը « 24 ».12.2009թ.
Գործողության ժամկետը մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը
Գինը 9.000.000 /ինը միլիոն/ ՀՀ դրամ

1.7. Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ 2009թ. պետական բյուջե

2. Գնման գործընթացի նախապատրաստումը

2.1. Գնման պահանջի ծագման

Իրավական հիմքը Ներքին հողվածային վերաբաշխման համաձայնության մասին ՀՀ ՖՆ թիվ 88 ծանուցագիր:

Օրը՝ ամսաթիվը Ուժի մեջ է մտել 24.12.09թ.

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

Պատասխանատու ստորաբաժանում ■ Տեխնիկական հանձնաժողով ☐

| | |
|---|---|
| Անվանումը | Տնտեսական վարչություն |
| Ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը | ՏՎ պետի ժ/պ Գ. Մարտիրոսյան |

2.3 Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանը ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի`

գնման ենթակա ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, մրցակցության բացակայությամբ, լիցենզիայի առկայությամբ.

■ Արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը` ժամկետի առումով անհնար է, պայմանով որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

պատվիրատուն, որևէ անձից կատարելով գնում, որոշում է լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով որ դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի քսան տոկոսը: Միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ:

2.4 Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը.

Ձեռքբերվող ապրանքատեսակի համար ֆինանսական միջոցները նախատեսվել են ներքին հոդվածային վերաբաշխման արդյունքում (ՀՀ ՖՆ ծանուցագիր թիվ 88): ՀՀ ոստիկանության կանոնադրական խնդիրների պատշաճ իրականացման անհրաժեշտությամբ պայմանավորված անհրաժեշտ է նշված ապրանքները ձեռքբերել մինչև 14.01.2010թ. ներառյալ, ուստի բյուջետային տարին ավարտելու հանգամանքով պայմանավորված ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է: Այդ նպատակով գնման գործընթացը կազմակերպվել է մեկ անձից գնման ձևով:

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներկայացնելու միջոցը`

Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում ■

3.2. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

| N | Անվանումը (անուն, ազգանունը | Հասցեն | Ներկայացված առաջարկի հիմքը` գրության համարը և ամսաթիվը նշվում է |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | «Ռսկան երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ՓԲԸ | Նոր-Նորքի 1-ին զ., Սաֆարյան փող., 11/1ա | 11/1788 24.12.2009թ. |

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

| N | Անվանումը (անուն, ազգանունը | Հասցեն | Առաջարկը ընդունելու հիմքը` գրության ամսաթիվը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | «Ռսկան երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ՓԲԸ | Նոր-Նորքի 1-ին զ., Սաֆարյան փող., 11/1ա | 24.12.2009թ. |
| | | | |

4. Գնման ընթացակարգի արձանագրության վարման պատասխանատու անձի

Անուն, ազգանունը Գ. Մարտիրոսյան
Պաշտոնը ՏՎ պետի տեղակալ
Հեռախոս /աշխ/ 56-18-76
Ստորագրությունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա

## ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

**ՊՓՏ № 02**

Իրավաբանական անձի անվանումը *«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» տպագրատուն-արտադրահրատարակչական բաց բաժնետիրական ընկերություն*

Գտնվելու վայրը *ք. Երևան, Նոր Նորքի 1-ին զանգված, Սաֆարյան փ. 11/1ա*

Գործունեության իրականացման վայրը *ք. Երևան, Նոր Նորքի 1-ին զանգված, Սաֆարյան փ. 11/1ա*

Գործունեության տեսակը *Տպագրություն*

Գործողության ժամկետը **Անժամկետ**

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ _______ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տրված է « 17 » Սեպտեմբերի 2007 թ.

Global

local assessment, global certification

# Certificate of Registration

*This Is To Certify That The*

**QUALITY MANAGEMENT SYSTEM**

*Of*

**"VOSKAN YEREVANTSI" PRINTING HOUSE-PUBLISHING AND MANUFACTURING OJSC**

11/1A, Safaryan str., Nor Nork, I massif, Yerevan, 0056, Republic of Armenia

**for**

Publishing activity, printing, polygraphy, printing of documents of national importance requiring special security

*has been assessed and registered against the provisions of*

**ISO9001:2000**

*International Standard*

*With*

| | | | |
|---|---|---|---|
| **Registration Number:** | 6371630935 | Project: | 8-8371-1-Q |
| **Certification Date:** | 30 June 2008 | EA Code: | 9 |
| **Recertification Due Date:** | 25 June 2011 | Exclusions: | 7.5.2 |
| **Certification Approved By:** | | Group Chief Executive Officer | |

Registration is subject to the management system being continually maintained to the above standard under regular surveillance.
Should surveillance not take place when required, registration shall be removed.

This certificate is the property of Global Certification Limited, Concorde House, Trinity Park, Birmingham B37 7UQ, England, United Kingdom

UKAS

008

Please validate the authenticity and status of this certificate at

014205